



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» «հուլիս» 2020 թ. № 246-Լ

ԱՍԲԵՍ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Թափոնների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժե» կետով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել «Ասբեստ պարունակող թափոնների կառավարման ուղեցույց»-ը՝ համաձայն հավելվածի:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

7/28/2020

X 

ՎԱՅԵ ԶԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«28» «հուլիս» 2020թ.
ք. Երևան

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԱՍՔԵՍՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Ասքեստ պարունակող թափոնների կառավարման ուղեցույցը (այսուհետ՝ ուղեցույց) կիրառելի է տնտեսական գործունեության արդյունքում առաջացած ասքեստ պարունակող թափոնների օգտագործման, հավաքման, ժամանակավոր պահման, փոխադրման և թաղման դեպքում:

2. Սույն ուղեցույցով սահմանվում են արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման), սպառման, շինարարության և քանդման արդյունքում առաջացած ասքեստ պարունակող թափոնների օգտագործմանը, հավաքմանը, ժամանակավոր պահմանը, փոխադրմանը և թաղմանը ներկայացվող անվտանգ պահանջներ՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա դրանց վնասակար ներգործության կանխման նպատակով:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն ուղեցույցում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **Ասքեստ**՝ երկու տեսակ սիլիկատների դասի թելքավոր միներալների հավաքական անվանում՝ քրիզոտիլ-ասքեստ և ամֆիբոլ-ասքեստ, որը հանդիպում է ակտինոլիթ, ամոզիտ, անթոֆիլիտ և այլն անվանումներով: Ամֆիբոլ ասքեստի արդյունահանումը և վերամշակումը ներկայումս դադարեցված է: Օգտագործվում է միայն քրիզոտիլ ասքեստը:

2) **Ասքեստ պարունակող թափոններ**՝ հումքի, կիսաֆաբրիկատների և այլ պատրաստվածքների մնացորդներ, որոնք գոյացել են ասքեստ պարունակող նյութերի արդյունահանման, հարստացման, օգտագործման և վերամշակման ընթացքում:

3) Սույն ուղեցույցում օգտագործված **այլ հասկացությունները** ունեն «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հասկացությունների իմաստը:

3. ԱՍՔԵՍՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՅԱՑՈՒՄԸ, ԿԱԶՄԸ, ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԹՈՒՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ

4. Քրիզոտիլային ասքեստը (այսուհետ՝ ասքեստ) նրբաթել կառուցվածքով միներալ է՝ խզման և ծոման բարձր ամրությամբ, մանվելու ունակությամբ, ադսորբցիոն հատկություններով, ունի ցածր մաշելիություն, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և էլեկրտամեկուսիչ հատկություններ և քիմիապես իներտ ու կայուն է:

5. Ասբեստը կիրառվում է որպես՝

1) ամրանավորող նյութ՝ ասբեստացեմենտի (խողովակներ, տանիքածածկի թերթեր, սալիկներ և այլ) արտադրություններում.

2) հակաբոցավառիչ՝ թղթի և տեքստիլ նյութերի համար.

3) շփական նյութ՝ արգելակի կոճղակների, մակափականների և կցորդիչի ազոյցների համար.

4) լցանյութ՝ պլաստիկների (ասբեստատեքստոլիտ, գետինաքս) և հերմետիկների (հերմետիկացնող բաղադրությունների) համար.

5) ալկալիակայուն նյութեր և պատրաստվածքներ.

6) զտիչ նյութ՝ քիմիական, դեղագործական և սննդի արդյունաբերության մեջ.

7) դիէլեկտրիկ և մեկուսիչ նյութ:

6. Ասբեստի արտադրության ընթացքում, ինչպես նաև պատրաստվածքների և նյութերի մեջ ասբեստ օգտագործող արդյունաբերական ճյուղերում գոյանում են ասբեստ պարունակող թափոնների հետևյալ տեսակները՝

1) լեռնահարստացման կազմակերպություններում ասբեստի հանքանյութի արդյունահանման և հարստացման ժամանակ գոյանում են երկու տեսակի ընդերքօգտագործման թափոններ՝ մակաբացման ապարներ և հարստացման արդյունքում առաջացած թափոններ:

Ըստ իրենց քիմիական կազմի՝ դրանք դասվում են մագնեզիումի հիդրօքսիլիկատների շարքին:

Մակաբացման ապարները կարող են օգտագործվել հանածոների պաշարները սպառած բացահանքերի լցման և խճի պատրաստման համար, իսկ հարստացման արդյունքում առաջացած թափոնները՝ սորուն շինարարական նյութերի (ավազի, խճի և այլն) զուգընթաց արտադրման համար: Չօգտահանված ընդերքօգտագործման թափոնները կարող են համատեղ պահեստավորվել, ինչը կնվազեցնի փոշու առաջացումը (մակաբացման ապարները ներկայացված են խոշոր ֆրակցիայով) և կնպաստի լցակույտերի ինքնավերականգնմանը.

2) ասբեստացեմենտի արտադրությունում գոյանում են թաց, չոր, փոշենման և այլ թափոններ: Թաց թափոնների պինդ ֆազան հանդես է գալիս ցեմենտի և ասբեստի թելքերի հիդրատացման արգասիքների ձևով, իսկ հեղուկ ֆազան՝ կալիումի քրոմատի ոչ մեծ քանակության պարունակությամբ նատրիումի և կալցիումի սուլֆիդների և հիդրօքսիդների տեսքով:

Թաց թափոնների որոշ մասը վերադարձվում է արտադրություն, իսկ մնացածը՝ տեղափոխվում է դեպի թաղման վայրեր:

Չոր թափոնները գոյանում են ասբեստացեմենտի պատրաստվածքների խոտանի և ջարդոնի հաշվին, իսկ փոշենման թափոնները՝ խողովակների և կցորդիչների/ազոյցների մեխանիկական մշակման, թերթերի կտրատման և ասբեստով լցված պարկերի ապատարայավորման արդյունքում:

Չոր և փոշենման ասբեստ պարունակող թափոնները կարող են օգտագործվել բետոնե հրակայուն որմնային շինվածքների համար որպես լցանյութ.

3) ասբեստատեխնիկական արդյունաբերության մեջ թափոնները գոյանում են տեքստիլ, ասբեստաշփակցորդիչների, պարոնիտի արտադրության ընթացքում: Որպես կանոն, դրանք թելքերի թափոններն են և արտամամլումից, հատքից ու ձևումից գոյացող թափոններն են: Այս տեսակի թափոնների մի մասը կարող է վերամշակվել հատուկ

սարքավորումների միջոցով և օգտագործվել հիմնական տեխնոլոգիական պրոցեսում՝ որպես հումքային հավելանյութ, իսկ մյուս մասը՝ արտահանվել դեպի տեղադրման վայրեր:

4) ասբեստաստվարաթղթի և ասբեստաթղթի արտադրությունում գոյանում են թաց և չոր կողմնակի արգասիքներ, որոնք վերադարձվում են տեխնոլոգիական պրոցես և միայն մասամբ են օգտահանվում:

7. Շինարարության և քանդման աշխատանքների արդյունքում առաջանում են ասբեստ պարունակող շինարարական թափոններ՝ տանիքածածկեր, երեսպատման սալեր, խողովակներ, օդափոխման տուփեր, էլեկտրատեխնիկական վահաններ, կտորների տեսքով ասբեստի թափոններ, ասբեստի փոշի և թելք, ասբեստե թղթի և ասբեստի փշրանքի թափոններ, ասբոցեմենտի տաշեղ և փոշի, ասբեստիտ, ասբոցեմենտի իրերի ջարդոն (թիթեղ, խողովակ), ասբոցեմենտի եզրակտրվածքներ, կտորների տեսքով ասբոցեմենտի թափոններ: Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N30 արձանագրային որոշմամբ:

8. Ասբեստ պարունակող թափոններն ընդգրկված են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն և 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամաններով հաստատված ցանկերում և դրանց համաձայն պատկանում են վտանգավորության 1-4-րդ դասերին:

9. Ասբեստ պարունակող թափոնների գործածությունը ենթակա է լիցենզավորման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N121-Ն որոշմամբ սահմանված կարգով:

10. Ասբեստ պարունակող յուրաքանչյուր տեսակի թափոնների վտանգավորության դասը, ինչպես նաև բաղադրիչների կազմն ու թունոնակությունը, դրանց ծագումը, ագրեգատային վիճակը, քիմիական կազմը, ծավալը և այլ տվյալները ներառվում են թափոն առաջացնողների թափոնի անձնագրում, որը հաստատվում է թափոն առաջացնող կազմակերպության ղեկավարի կողմից՝ համաձայնեցնելով շրջակա միջավայրի նախարարության հետ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N47-Ն որոշման:

4. ԱՍԲԵՍՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. Արդյունաբերական կազմակերպությունների նախագծային փաստաթղթերը պարունակում են տվյալներ՝ տվյալ արտադրության ընթացքում, ըստ արտադրական տեխնոլոգիաների առաջացող ենթադրյալ արտադրական թափոնների, ներառյալ՝ ասբեստ պարունակող թափոնների քանակության կամ ծավալի, որակի և դրանց վտանգավորության դասերի վերաբերյալ՝ տվյալ արտադրության ընդլայնման կանխատեսվող ծավալին և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներին համապատասխան:

12. Ասբեստ պարունակող թափոնների հավաքումն ու ժամանակավոր պահումն առաջարկվում է իրականացնել հետևյալ հիմնական պայմանների պահպանմամբ՝

1) փոշեհավաք զետեղարանների (կուտակարանների) ելքային սարքերից թափոնների դեպի հատուկ տարողություններ (պարկեր, ավտոտրանսպորտ և այլն) բեռնահանման տեխնոլոգիան իր կառուցվածքով լինի պարզ՝ բացառելով թափոնների թափումը և ցրումը:

2) տարողությունների (պարկերի) փոխարինման աշխատանքները կատարվում են այդ գործողության իրականացման համար համապատասխան ուսուցում կամ վերապատրաստում անցած անձանց կողմից՝ համապատասխան անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ.

3) համապատասխան սարքերի, կառույցների կամ մեխանիզմների տակ և դրանց շուրջ հատակին կուտակվող քերուկը և աղբը հեռացվում են փոշեգոյացումը բացառող միջոցներով: Դրանք ձեռքով հավաքելու դեպքում առաջարկվում է կիրառել շնչառական օրգանների պաշտպանության անհատական միջոցներ (շնչադիմակ):

4) այլ միջոցներով հավաքված սորուն նյութերը տեղադրվում են անթափանց պարկերում (բեռնարկղերում).

5) սորուն նյութի հավաքման, սարքավորման վերանորոգման և ապամոնտաժման աշխատանքների ժամանակ օգտագործվում են անփոշեթափանց ծածկեր՝ պարկերում և տարողություններում թափոնների հետագա հեռացումը հեշտացնելու համար.

6) աշխատանքային վայրերը, որտեղ պարբերաբար տեղի են ունենում թափոնների հավաքում և հեռացում, ապահովված են լինում բավարար քանակությամբ փոխարինվող տարաներով՝ բացառելով դրանց գերլցումը: Տարողությունների փոխարինումը և դատարկումը կատարվում է մեքենայացված եղանակով.

7) կոշտ թափոնները (կապակցված ասբեստ, ասբեստացեմենտ, կարաքանդման թափոններ, կոտրատված արգելակի կաղապարներ, բիտումային մածիկով ներծծված ռետինի մնացորդներ, պոմպակայանների վերանորոգման ընթացքում առաջացած թափոններ և այլն) պահվում են այնպիսի վայրերում, որտեղ մինչև հեռացվելը դրանք չեն ենթարկվի քայքայման.

8) պարկերը կամ այլ տարաները, որոնք պարունակում են ասբեստի սորուն թելքեր, առաջարկվում է հեռացնել հատուկ հատկացված տեղում՝ մանրացնելով և/կամ փաթեթավորելով շարժական ամուր հակերում: Հատուկ հատկացված տեղը (սենքը) ունենում է նախազգուշական նշաններ՝ պաշտպանության միջոցների նշագրմամբ և միացված է լինում փոշեկլանիչ համակարգին.

9) ասբեստից դատարկված պարկերը որպես երկրորդային հումք կարող են կիրառվել ասբեստացեմենտի և այլ պատրաստվածքների արտադրությունում.

10) ասբեստ պարունակող հեղուկ թափոնները պահեստավորվում են հատուկ բեռնարկղերում, տարողություններում կամ ամբարներում և պարբերաբար դատարկվում.

11) հեռացման համար պատրաստ բոլոր ասբեստ պարունակող թափոնները, որոնք գտնվում են բեռնարկղերում, պարկերում կամ տարողություններում ունենում են համապատասխան գրառումներ կամ նշումներ.

12) ասբեստ պարունակող սորուն կամ փոշենման թափոնների հավաքումից առաջ կատարվում է խոնավացում՝ այն տեղերում, որտեղ գործնականում դա հնարավոր է.

13) կազմակերպության արդյունաբերական հրապարակում թափոնների փակ կամ բաց վիճակով տեղադրման դեպքում պահպանվում են վնասակար նյութերի հնարավոր արտանետումների ու արտահոսքերի առողջապահական և բնապահպանական նորմատիվների համապատասխանությունը:

13. Ասբեստ պարունակող արդյունաբերական թափոնների փոխադրումը դեպի պոլիգոններ կարող է իրականացվել տվյալ կազմակերպությանը կամ պայմանագրի հիման վրա դրա հետ համագործակցող այլ կազմակերպությանը պատկանող փոխադրամիջոցներով:

14. Ասբեստ պարունակող թափոնների բեռնման և փոխադրման, բեռնաթափման և թաղման հետ կապված աշխատանքները կատարվում են մեքենայացված՝ փոքր մեքենայացման ամբարձիչ տրանսպորտի օգնությամբ՝ բացառելով կեռերի և այլ սուր հարմարանքների օգտագործումը:

15. Տակդիրների վրա ասբեստ պարունակող թափոնների պարկերի ստանդարտ խմբաքանակների հետ բեռնման և բեռնաթափման աշխատանքները կատարվում են բեռնարկղատարերի, ավտոբեռնիչների, ամբարձիչների կամ նմանատիպ այլ սարքավորումների օգնությամբ:

16. Ասբեստ պարունակող թափոնների փոքր խմբաքանակների փոխադրումը կարող է իրականացվել առանց փաթեթավորման (կիտվածքով) հատուկ ավտոմոբիլային տրանսպորտով կամ ռետինակորդային բեռնարկղերում (խոշոր պարկեր):

17. Ասբեստ պարունակող թափոնների տեղափոխումն իրականացվում է ծածկ ունեցող փոխադրամիջոցներով:

18. Ասբեստ պարունակող թափոնների փոխադրման համար օգտագործվող բոլոր փոխադրամիջոցներն աշխատանքների ավարտից հետո պատշաճ կերպով մաքրվում են թափոնների մնացորդներից:

19. Ասբեստ պարունակող թափոնների բեռնման և բեռնաթափման տեղերում առաջարկվում է նախատեսել բավականաչափ հզորությամբ արդյունաբերական փոշեկուլներ և ունենալ կաշուն ժապավենների պաշար՝ ջարդվածքի արագ վերացման համար:

20. Առաջարկվում է ասբեստ պարունակող հեղուկ և մածուկանման թափոնները հաշվարկված կերպով լցնել ավտոմեքենայի թափքում՝ թույլ չտալով ընթացքի ժամանակ դրանց գերլցումը:

21. Ասբեստ պարունակող փոշենման թափոնների հետ աշխատանքներ կատարելիս կատարվում է խոնավացում՝ բեռնման, փոխադրման, բեռնաթափման և պահեստավորվող թափոնների համահարթեցման բոլոր փուլերում:

22. Փոքր ծավալներով ցրման դեպքում թափոնները հավաքվում են սկզբնական տարողությունում, իսկ զգալի ցրման դեպքում՝ խորհուրդ է տրվում դրանք խոնավացնել և հեռացնել՝ պահպանելով նախազգուշական անհրաժեշտ միջոցները, ներառյալ՝ անհատական պաշտպանության միջոցները:

23. Ասբեստ պարունակող թափոնների բեռնման և բեռնաթափման աշխատանքներ կատարողները և տեղափոխող փոխադրամիջոցների վարորդները հրահանգավորվում են բեռնման, բեռնաթափման և բեռների փոխադրման կանոնների վերաբերյալ:

24. Ասբեստ պարունակող թափոնները կարող են կոշտ կենցաղային թափոնների հետ համատեղ տեղադրվել պոլիգոններում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N16 արձանագրային որոշման:

25. Վտանգավորության 4-րդ դասին պատկանող ասբեստ պարունակող թափոնները՝ ասբեստ-ցեմենտային ջարդոնը և ասբեստի փշրանքը կարող են առանց քանակական սահմանափակումների ընդունվել պոլիգոններ և օգտագործվել որպես մեկուսիչ նյութ, իսկ վտանգավորության 3-րդ դասինը՝ սահմանափակ քանակությամբ (կոշտ կենցաղային թափոնների զանգվածի 30%-ից ոչ ավել) և տեղադրվել կենցաղային թափոնների հետ համատեղ:

26. Պոլիգոն տեղափոխվող ասբեստ պարունակող թափոններն ունենում են վտանգավոր թափոնների անձնագիր՝ թափոնների բաղադրության տեխնիկական բնութագրամբ և պոլիգոնում թափոնների անվտանգ գործածության միջոցառումների համառոտ նկարագրությամբ:

27. Վտանգավորության 4-րդ դասի ասբեստ պարունակող կոշտ թափոնները պոլիգոնում տեղադրվում են շերտերով՝ յուրաքանչյուր շերտի հարթեցմամբ և պնդեցմամբ:

28. Վտանգավորության 1-3-րդ դասի ասբեստ պարունակող կոշտ և փոշենման թափոնները թաղվում են փոսորակներում: Փոսորակի չափսերը չեն նորմավորվում: Փոսորակի մեջ ասբեստ պարունակող թափոնները լցվում են շերտերով և պնդեցվում: Առաջարկվում է ասբեստ պարունակող թափոնների առավելագույն մակարդակը փոսորակում նախատեսել ծրագրված նիշից ցածր՝ փոսորակին հարակից տարածքից առնվազն 2 մ հեռավորությամբ:

29. Փոշենման ասբեստ պարունակող թափոնների թաղումը փոսորակներում իրականացվում է փոխադրամիջոցից բեռնաթափման ժամանակ քամու ազդեցությամբ այդ թափոնների տարածումը բացառող եղանակներով՝ թրջման մեթոդով կամ փաթեթներով ու թղթե պարկերով փոխադրման միջոցով: Փոշենման թափոնները փոսորակի մեջ լցնելուց հետո այն մեկուսացվում է հողի շերտով:

30. Նախագծով նախատեսված սահմանային մակարդակը ասբեստ պարունակող թափոններով լցվելուց հետո, փոսորակը մեկուսացվում է 0,25մ հաստությամբ պնդեցված հողի շերտով:

31. Հորերն ու հորանները կարող են օգտագործվել միայն ասբեստ պարունակող կտորներով թափոնների պահեստավորման համար:

32. Պոլիգոնի շահագործման ժամկետի ավարտից հետո առաջարկվում է կատարել տվյալ տարածքի խախտված հողերի վերականգնում կամ ռեկուլտիվացում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1643-Ն որոշմամբ սահմանված կարգով:

33. Առաջարկվում է ասբեստ պարունակող թափոնների թաղման աշխատանքներ կատարողներին հրահանգավորել թաղման կանոնների վերաբերյալ:

7. ԱՍԲԵՍՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԹՎՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

34. Ասբեստ պարունակող թափոնների գործածությամբ զբաղվող կազմակերպությունների ղեկավարներն ստեղծում են նշված աշխատանքների կատարման

անվտանգությունն ապահովող պայմաններ, ընդունում ընթացակարգեր և իրականացնում համապատասխան միջոցառումներ:

35. Ասբեստ պարունակող թափոնների անվտանգ գործածության պայմանների ապահովման համար կարևոր է հետևյալ երեք ծրագրային ուղղությունների իրականացումը՝

1) աշխատակիցների անվտանգության ապահովումը, որն ընդգրկում է աշխատակիցների պատշաճ վերապատրաստումը, անհատական պաշտպանության միջոցների օգտագործումը և աշխատանքային հատուկ ընթացակարգերը, որոնց իրականացումը կապահովի աշխատակիցների պաշտպանությունն ասբեստի վտանգավոր ազդեցությունից.

2) աշխատանքային վայրերից տեսանելի ու անտեսանելի ասբեստի (միկրոմասնիկների) հեռացման անվտանգության ապահովումը՝ խուսափելով մնացորդային մանրաթելերի գոյացումից, որոնք կարող են վնասակար ազդեցություն ունենալ տվյալ տարածքում գտնվող մարդկանց և շրջակա միջավայրի վրա.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին աշխատանքների անվտանգության պայմանների համապատասխանության ապահովումը:

36. Սույն փաստաթղթի կիրառելիության աստիճանը որոշվում է ելնելով ասբեստ պարունակող թափոնների առկա քանակից:

Եթե նախատեսված աշխատանքների ընթացքում հեռացման ենթակա են ոչ ավելի քան 1մ³ ասբեստ պարունակող թափոններ, ապա տվյալ կազմակերպության կողմից կառավարման հատուկ ընթացակարգերի կիրառումը պարտադիր չէ, սակայն խորհուրդ է տրվում նախազգուշական միջոցների, ներառյալ՝ անհատական պաշտպանության միջոցների (տարածքի խոնավացումը և պարկերի մեջ թափոնների տեղադրումը) կիրառումը՝ փոշու առաջացումը կանխելու նպատակով:

37. Ասբեստ պարունակող թափոնների գործածության ընթացքում կազմակերպության ղեկավարն ապահովում է տվյալ տարածքի անվտանգությունը, երբ աշխատողները կամ տվյալ գործընթացներին մասնակից այլ անձինք գտնվում են տարածքում, ինչպես նաև այն ժամանակ, երբ մուտքը դեպի հեռացված ասբեստ պարունակող թափոններ տարածքներ որևէ կերպ սահմանափակված չէ:

38. Առաջարկվում է ասբեստ պարունակող թափոնների հեռացման աշխատանքների կատարման ընթացքում (նախապատրաստումից մինչև վերջնական հեռացում) համապատասխան շինություններ կամ տարածքներ մարդկանց համար մուտքը սահմանափակել, բացառությամբ՝ տվյալ տարածք մուտք գործելու իրավասություն ունեցող անձանց:

39. Ասբեստ պարունակող թափոնների հեռացման աշխատանքների իրականացումից առաջ տվյալ տարածքում գտնվող կահավորանքը հեռացվում է: Այն սարքավորումները կամ պարագաները, որոնք չեն կարող հեռացվել այդ աշխատանքների ընթացքում, ծածկվում են պոլիէթիլենային թաղանթով:

40. Աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում ասբեստ պարունակող թափոնները լինում են խոնավ, բայց ոչ հեղուկով հագեցած՝ պարբերաբար թրջելով հատուկ լուծույթով: Թրջված մանրաթելերը ծանրանում են և չեն կարող տարածվել օդով՝ ի տարբերություն չորերի:

41. Խոնավացման համար օգտագործվում է հատուկ քիմիական նյութեր պարունակող լուծույթ, որը ներթափանցում և թրջում է ասբեստի մանրաթելերը: Եթե նման լուծույթ վաճառքում չկա, ապա կարելի է կիրառել ջրի և սովորական կենցաղային լվացող

հեղուկի խառնուրդ՝ 1 մաս լվացող նյութը 200 մաս ջրի հետ տարալուծելով, որի համար նախատեսվում է կուտակման բաք:

Առաջարկվում է խուսափել մաքրող հեղուկի (օճառի) շատ մեծ քանակներից, քանզի օգտագործված հեղուկը հատակը կդարձնի սահուն:

42. Ասբեստ պարունակող թափոնները հեռացվում են զգուշությամբ՝ խուսափելով այն վնասելուց (կոտրելուց կամ մանրացնելուց): Հատուկ լուծույթով խոնավացված ասբեստ պարունակող թափոնները զերծ են պահում էլեկտրական սարքերի ներգործությունից:

43. Եթե ասբեստ պարունակող թիթեղների ապամոնտաժման համար անհրաժեշտ է հեռացնել մեխերը կամ պտուտամեխերը, ապա դրանց ամրացման հատվածները, մեխերը կամ պտուտամեխերն ամբողջությամբ, ներառյալ՝ գլխիկները, ինչպես նաև դրանց հեռացումից հետո առաջացած անցքերը ևս խոնավացնում են հատուկ լուծույթով:

44. Գամերով ամրացված թիթեղների հեռացման դեպքում, թիթեղներն ապամոնտաժվում են ձեռքի գործիքներով՝ հնարավորինս խուսափելով թիթեղները վնասելուց: Այս դեպքում ևս հատուկ լուծույթ է օգտագործվում: Եթե գամի հակառակ կողմը հասանելի է, ապա գամը հեռացվում է առանց վնասելու թիթեղը կամ սալիկը, իսկ եթե թիթեղն ամրակցված է մետաղական հենարանին, ապա գամը կարող է հեռացվել մետաղական հենարանի կողմից:

Մեխերի հանման ընթացքում խորհուրդ է տրվում փոշեկլանիչ օգտագործել:

45. Հատուկ լուծույթով արդեն իսկ խոնավացված ասբեստ պարունակող թափոնների բեկորները, ներառյալ՝ ապամոնտաժված թիթեղները, մեխերը կամ պտուտամեխերը տեղադրվում են հատուկ պոլիէթիլենային պարկերում՝ բացառելով տվյալ տարածքի մակերեսին դրանց կուտակումը:

46. Հեռացման ենթակա ասբեստ պարունակող թափոնները տեղադրվում են ճմմ հաստությամբ պոլիէթիլենային պարկերի մեջ, պարկը ամուր կապվում կամ փաթեթավորվում է այնպես, որ օդազրկվի, հատուկ լուծույթով թրջված լաթով մաքրվում է պարկի կամ փաթեթավորման արտաքին մակերեսը և դրանք հեռացվում աշխատանքային տարածքից՝ տեղադրելով պահեստավորման համար հատկացված վայրում: Մինչև պահեստավորումը, խորհուրդ է տրվում բացառել պարկերի կամ փաթեթների չորացումը:

47. Ասբեստ պարունակող թափոնների հեռացման ժամանակ պոլիէթիլենի ճմմ հաստությամբ թաղանթի մեկ շերտով ծածկվում են այն հատվածները, որտեղ հնարավոր է արտահոսքի առաջացում, այդ թվում՝ պատուհանները, դռները, օդափոխման խողովակները և համակարգերը, քանի որ աշխատանքների ավարտից հետո դժվար կլինի դրանց մաքրումը, մասնավորապես, այն դեպքերում երբ տարածքում կատարվում են ասբեստ պարունակող առարկաների կամ թափոնների կտրման, մանրացման աշխատանքներ, կամ այլ գործողություններ, որոնց արդյունքում արձակվում են մասնիկներ կամ գոյանում է փոշի:

48. Ասբեստ պարունակող թափոնների հեռացումից հետո տվյալ տարածքը մաքրվում է խոնավացմամբ: Խորհուրդ է տրվում բացառել տարածքի մաքրումը չոր վիճակում (ավլել, սրբել), ինչը կարող է նպաստել մանրաթելերի տարածմանն օդում:

49. Ասբեստ պարունակող թափոնները տեղադրվում են բետոնե կամ ասֆալտ-բետոնե կաղապարում, ինչի վրա ամրացվում է մշտապես տեսանելի և նախազգուշացնող անջրաթափանց պիտակ, այնպես որ հետագայում իրականացվող աշխատանքների ժամանակ պարզ լինի, թե որ կաղապարում է այն պահված:

50. Բետոնե կաղապարը տեղադրվում է հողի մակերևույթից առնվազն 1մ խորության վրա և ծածկվում հողի շերտով: Ցանկալի է, որպեսզի կաղապարի չափերը թույլ տան դրա հետագա տեղափոխումը՝ խիստ անհրաժեշտություն առաջանալու դեպքում:

51. Ասբեստ պարունակող թափոնների գործածության հետ կապված յուրաքանչյուր աշխատանքի ավարտից հետո աշխատանքային միջոցները, ներառյալ՝ աշխատողների պաշտպանիչ դիմակները փխտահանվում են հատուկ լուծույթով:

52. Աշխատանքների և աշխատողների անվտանգության կանոնների պահպանման նպատակով, ասբեստ պարունակող թափոնների գործածություն իրականացնող կազմակերպության ղեկավարը ապահովում է՝

1) աշխատանքային տարածքում կամ մոտակայքում լվացվելու և լոգանքի կետերի առկայությունը: Առաջարկվում է աշխատավայրում նախատեսել այնպիսի տարածք, որտեղ աշխատողները կարողանան փոխել իրենց պաշտպանիչ հանդերձանքը, լողանալ և մաքրել աշխատանքային հագուստն ու պարագաները, որից հետո միայն զգեստափոխվել:

2) աշխատանքային տարածքում օդափոխիչների և փոշեկլանիչ սարքերի ու սարքավորումների առկայությունը և դրանք սարքին վիճակում պահելը:

3) սույն ուղեցույցում ամրագրված աշխատանքային միջոցների (հատուկ լուծույթներ, բակեր, այլ տարաներ և այլն) առկայությունը:

4) աշխատողների անհատական պաշտպանության միջոցների (պաշտպանիչ դիմակներ, հանդերձանք և այլն) առկայությունը: Նպատակահարմար է կիրառել՝ բացասական ճնշման օդափոխմամբ պաշտպանիչ դիմակներ՝ «P-100» մակնիշի կամ դրան համարժեք ֆիլտրող սարքավորմամբ և մեկանգամյա օգտագործման հատուկ հանդերձանք կամ այնպիսի հանդերձանք, որը կօգտագործվի միայն տվյալ աշխատանքային տարածքում:

53. Ասբեստ պարունակող թափոնների հետ աշխատելիս ծխելն արգելվում է, մասնավորապես, ասբեստ պարունակող թափոնների հեռացման դեպքում: Անձնակազմը տեղեկացվում է ծխախոտի ներգործությամբ առողջության վրա ասբեստի առավել բացասական ազդեցության և դրա հետևանքների մասին:

54. Ասբեստ պարունակող թափոնների գործածության աշխատանքներում ներգրավված աշխատողների անվտանգությունն ապահովելու նպատակով առաջարկվում է անցկացնել հետևյալ թեմաներով անձնակազմի վերապատրաստման դասընթացներ՝

1) ասբեստի հայտնաբերման եղանակների, ասբեստ պարունակող նյութերի, դրանց փխրվող և չփխրվող հատկությունների և տեսակների վերաբրյալ:

2) մարդու առողջության վրա ասբեստի բացասական ազդեցությունների և դրանց հիվանդածին հետևանքների (թոքերի քաղցկեղ, ասբեստոսիս, մեզոտելիոմա և այլն) վերաբրյալ:

3) ասբեստ պարունակող թափոնների գործածության ընթացքում շնչառական ուղիների պաշտպանության կիրառելու և անհատական պաշտպանության միջոցներ կրելու վերաբերյալ, ներառյալ՝ դրանց օգտագործման գործնական դասընթացներ:

4) ասբեստ պարունակող թափոնների գործածության ընթացքում դրանց ազդեցության նվազեցման (հեռացման, բեկորների տեղադրման, փխտահանման) մեթոդների վերաբերյալ:

5) ասբեստ պարունակող թափոններով աշխատանքային տարածքի, պոլիէթիլենային թաղանթների, անհատական պաշտպանության միջոցների և վերջնական մաքրման կամ փխտահանման ենթակա այլ միջոցների վերաբերյալ: